შეფასებისა და გამოცდების ეროვნული ცენტრი

# Թեստ աշխարհագրությունից

## Հրահանգ

Ձեր առջև թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, ճիշտ ընկալեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և նոր միայն սկսեք աշխատանքը:

Թեստի վրա աշխատելիս կիրառեք կցված քարտեզները:

Նկատի ունեցեք, որ եթե ճիշտ պատասխանի հետ մեկտեղ նշեք նաև սխալ պատասխանը, ապա միավոր չեք վաստակի:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 59**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ**

**Մաղթում ենք հաջողություն:**

- *Հարց ընտրովի պատասխաններով - առաջադրանք # 1-20*

*Հրահանգ*

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը ճիշտ նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Աշխարհագրության ո՞ր ճյուղն է ուսումնասիրում լուսանկարի վրա պատկերված ջրային (հիդրոլոգիական) օբյեկտը:



ա.Սպելեոլոգիան

բ. Լիմնոլոգիան

գ. Գլացիոլոգիան

դ.Օդերևութաբանություն

## 2. Ո՞ր բնական զոնայի տարածման արեալն է ներկայացված քարտեզի վրա:



ա. Տափաստանի

բ. Անապատի

գ. Սելվասի

դ. Սավաննայի

3. Ամենից շատ ո՞ր անտառն է առանձնանում բուսատեսակների բազմազանությամբ և բազմաշարահարկությամբ:

ա. Տերևաթափվող

բ. Փշատերև

գ. Խոնավ հասարակածային

դ. Խառը

4. Նկարի վրա ներկայացված է աշնանային գիշերահավասարի ընթացքում երկնակամարի վրա արեգակի շարժման հետագիծը: Ուշադիր նայեք և որոշեք, թե ո՞ր վայրն է ներկայացված սխեմայի վրա:



ա. Հյուսիսային բևեռը

բ. Հյուսիսային բևեռային շրջանը

գ. Հասարակածը

դ. Հարավային արևադարձը

5. Ըլնելով ներկայացված դիագրամից որոշեք, ո՞րն է ճշգրիտ տեղեկատվությունը:




ա. Ապրիլի 28-ի, ժամը 16-18-ի ժամանակահատվածում, ամրագրվել է տեղատարափ անձրև

բ. Ապրիլի 29-ին օդի ջերմաստիճանի ամպլիտուդը (լայնույթ) կազմում էր $8^0C$

գ. Ապրիլի 29-ի, ժամը 10-16-ի ժամանակահատվածում, նշվել է փոփոխական ամպամածություն

դ.Ապրիլի 30-ի, ժամը 8-12-ի ժամանակահատվածում, ամրագրվել է ուժեղ քամի

6. Ո՞ր պետության ջրափնյա գիծն  է ներկայացված նկարի վրա:





ա. Ֆրանսիայի
բ. Նորվեգիայի
գ. Գերմանիայի
դ. Հունաստանի

**7. Մոտավորապես քանի՞ կիլոմետրի շրջանակներում է տատանվում երկրի  օվկիանոսային կեղնի հաաստությունը:**

ა. 5-10

ბ. 30-40

გ. 55-70

დ. 80-100

8. Ըստ հայելու մակերեսի   ո՞րն է աշխարհի ամենամեծ քաղցրահամ լիճը:

ա. Վերին

բ. Բայկալը

գ. Կասպից

դ. Տիտիկական

9. Ո՞ր թեթև ծակոտկեն ապարն է գոյանում հանքային աղբյուրներից կալցիումի կարբոնատի նստվածք տալու հետևանքով:



ա. Տրավերտինը

բ. Բազալտը

գ. Անդեզիտը

դ. Գրանիտը

10. Ո՞ր պետությունում է արվել տվյալ լուսանկարը:





ա. Իսպանիայում կամ Պորտուգալիայում

բ. Իորդանիայում կամ Իսրայելում

գ. Հնդկաստանում կամ Պակիստանում

դ. Իրանում կամ Թուրքիայում

11. Աշխարհը, որպես միասնական տնտեսական միավոր քննարկելու դեպքում, ո՞ր դիագրամը կհամապատասխանի համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքին:




ա.




բ.




գ.




դ.

12. Քարտեզի վրա ներկայացված է ոգելից խմիչքների օգտագործումը աշխարհի երկրների համաձայն (տարի/լիտր մեկ շնչի հաշվով): Թվարկածներից ինչո՞վ է պայմանավորված որոշ երկներում ալկոհոլի նվազագույն օգտագործումը (<2.1):




ա. Բնակչության առողջական վիճակը

բ. Կլիմայական պայմանները

գ. Որակյալ ոգելից խմիչքների դեֆիցիտը

դ. Կրոնական գործոնը

## 13. Ո՞ր պետության տարածքում է գտնվում Սուեզի ջրանցքը:

ա. Սիրիայի

բ. Իսրայելի

գ. Եգիպտոսի

դ. Հորդանանի

**14. XX դարի երկրորդ կեսին ո՞ր երկիրն է բաժանվել ամենաշատ անկախ պետությունների:**

ա. Չեխոսլովակիան

բ. ԽՍՀՄ-ը

գ. Գերմանիան

դ. Հարավսլավիան

**15. Ո՞ր պետությունում է արտադրված լուսանկարի վրա պատկերված գինին:**




ա. Իտալիայում

բ. Իսպանիայում

գ. Պորտուգալիայում

դ. Ֆրանսիայում

**16. Թվարկածներից ո՞րն է համարվում ԱԷԿ-ների գործունեության հետ կապված հիմնական էկոլոգիական հիմնախնդիրը:**

ա. Գյուղատնտեսական հանդակների հեղեղումը

բ. Վտանգավոր գեոդինամիկ գործընթացների ակտիվացումը

գ. Ձայնային և էլեկտրոմագնիսական աղտոտումը

դ. Ռադիոակտիվ թափոնների վնասազերծումը

**17. Ո՞ր տարածաշրջանն է սպառում ամենամեծ քանակությամբ նավթ:**

ա. Մերձավոր Արևելքը

բ. Լատինական Ամերիկան

գ. Հարավարևելյան Ասիան

դ. Արևմտյան Եվրոպան

**18. Բրազիլիայի ո՞ր քաղաքն է գտնվում օվկիանոսի ափից մոտավորապես 1500 կիլոմետր հեռավորության վրա, սակայն համարվում է Ատլանտյան օվկիանոսի նավահանգստային քաղաք:**

ա. Բրազիլիան

բ. Մանաուսը

գ. Սան-Պաուլուն

դ. Ռիո-դը-Ժանեյրոն

## 19. Ինչի՞ համաձայն են խմբավորված քարտեզի վրա ներկայացված պետությունները:




ա. Բնակչության խտության
բ. ՀՆԱ-ի ծավալի
գ. Բնակչության թվաքանակի
դ.Գլոբալիզացիայի (KOF) ինդեքսի

## 20. Ի՞նչ պայման է բավարարում չեզոք կարգավիճակ ունեցող պետությունը:

ա. Չի մասնակցում զինված հակամարտությանը, սակայն կարող է լինել ռազմական բլոկի անդամ

բ. Չի մասնակցում զինված հակամարտությանը և չի հանդիսանում որևէ ռազմական բլոկի անդամ

գ. Չի համարվում որևէ միջազգային կազմակերպության անդամ

դ. Կարող է մասնակցել միջազգային ռազմական հակամարտությանը, սակայն չի համարվում որևէ ռազմական բլոկի անդամ

➢ *Համապատասխանության որոշում՝ առաջադրանք # 21-27*

**Հրահանգ**

Որոշեք համապատասխանությունը առաջադրանքում ներկայացված երկու թվարկացանկի միջև: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Յուրաքանչյուր տառի տակ գրեք համապատասխան թվանշանը: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 2:

## 21. Որոշեք համապատասխանությունը (նկատառեք, որ պատասխանը հնարավոր է կրկնել):

| | Պահպանվող տարածք | | Պետություն |
|---|---|---|---|
| ა | Ելոուսթոունի | 1 | ԱՄՆ |
| ბ | Զանգեզուրի | 2 | Հայաստան |
| გ | Դիլիջանի | 3 | Ռուսաստան |
| დ | Մերձբայկալյան | 4 | Ադրբեջան |
| ე | Զաքաթալայի | | |
| ვ | Մամոնտի քարանձավի | | |

**22. Որոշեք համապատասխանությունը (նկատառեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել):**

| | Մայրցամաք | | Բարձրագույն կետ |
|---|---|---|---|
| ა | Հյուսիսային Ամերիկա | **1** | Մաունա-Լոա լեռ |
| ბ | Հարավային Ամերիկա | **2** | Դենալի լեռ |
| გ | Ավստրալիա | **3** | Կիլիմանջարո լեռ |
| დ | Անտարկտիդա | **4** | Ակոնկագուա լեռ |
| | | **5** | Կոստյուշկո լեռ |
| | | **6** | Թխաուլագիր լեռ |
| | | **7** | Վինսոնի զանգված |
| | | **8** | Էրեբուս լեռ |

**23. Որոշեք համապատասխանությունը (նկատառեք, որ պատասխանը հնարավոր է կրկնել):**

| | Կլիմայական գոտու նկարագիր | | Կլիմայական գոտի |
|---|---|---|---|
| ა | Սուր՝ կտրուկ կերպով են ատրահայտված տարվա բոլոր չորս եղանակները | **1** | Հասարակածային |
| ბ | Բնորոշ են հաճախակի անձրևները: Չունի չոր եղանակ: | **2** | Բարեխառն |
| გ | Կլիման սառն է: Ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է 5-ից մինչև 10°C: | **3** | Մերձարկտիկական |
| დ | Մայրցամաքների վրա բնորոշ են անապատների և կիսաանապատների լանդշաֆտները, իսկ օվկիանոսում՝ ջրի բարձ ջերմաստիճանն և աղիությունը: Տիպիկ են օդի անտիցիկլոնային շրջապտույտը, ցածր հարաբերական խոնավությունը, փոքր ամպամածությունը: | **4** | Արևադարձային |
| ე | Եղանակը ամեն օր նույնն է: Օդի միջին ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդը փոքր է: | | |
| ვ | Ձյան ծածկը պահպանվում է ավելի քան 8 ամիս: Տարածքի հիմնական հատվածում տարածված է հավերժական սառածությունը: | | |

**24.** Որոշեք համապատասխանությունը (նկատառեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել):

**Լուսանկար**

ა


ბ


გ


დ


ე


ვ


**Մայրցամաք**

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| Աֆրիկա | Ասիա | Ավստրալիա | Անտարկտիդա | Եվրոպա | Հյուսիսային Ամերիկա | Հարավային Ամերիկա |

## 25. Որոշեք համապատասխանությունը (նկատառեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնել):

### Տարածման արեալ

ა




ბ




გ




დ




ე




### Գյուղատնտեսական մշակաբույսեր

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| Ցորեն | Բամբակ | Բրինձ | Եգիպտացորեն | Շաքարի ճակնդեղ |

**26.** Որոշեք համապատասխանություն (նկատառեք, որ պատասխանը հնարավոր է կրկնել)։

| Լուսանկար | | |
|---|---|---|
|  |  |  |
|  |  |  |

| Գիտության ճյուղ | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Կրթության աշխարհագրություն | Սեյսմոլոգիա | Օվկիանոսաբանություն | Սպելեոլոգիա | Ցամաքի հիդրոլոգիա |

**27.** Որոշեք համապատասխանությունը (նկատառեք, որ պատասխանը հնարավոր *չէ* կրկնվել):

**Արժույթ**

ա


Ֆունտ ստեռլինգ

բ


Յուան

գ


Մանաթ

դ


Դրամ

ե


Տենգե

զ


Իեն

**Պետություն**

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Չինաստան | Իռլանդիա | Ղազախստան | Հայաստան | Թուրքմենստան | Ադրբեջան | Ճապոնիա | Միացյալ թագավորություն |

- ***Տեղեկատվության վերլուծություն ՝առաջադրանք # 28-31***

**Հրահանգ**

Ուշադիր ծանոթացեք տրված տեղեկատվությանը (լուսանկար, աղյուսակ, գրաֆիկ և այլն) և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

**28.** **(2) Վերլուծեք նկարները և որոշեք.**

(ա) Ո՞ր պետություններն են միավորված Սկանդինավյան ավիաուղիներում:

(բ) Ինչու՞ են գործածված այս գույները ընկերության լոգոյի դիզայնում:

SAS

Scandinavian Airlines



29. (3) Լուսանկարի վրա պատկերված ջրվեժը գտնվում է Զամբիայի և Զիմբաբվեի սահմանի վրա: Որոշեք.

(ա) Ո՞ր ջրվեջն է պատկերված լուսանկարի վրա և ո՞ր գետի վրա է այն գտնվում:

(բ) Ո՞ր եվրոպացի հետազոտողն է առաջին անգամ նկարագրել այս ջրվեժը:



30. (3) Վերլուծեք նկարները և որոշեք.

(ա) Ի՞նչ հիմնախնդիր են արտացոլում տրված նկարները:

(բ) Ելնելով նկարներից ո՞րն է այդ հիմնախնդրի ծագման պատճառը:

(գ) Դատողություններ արեք մեկ կոնկրետ սպառնալիքի (վտանգի) շուրջ, որը ծագել է Եվրամիության պետությունների համար այս հիմնախնդրի պատճառով:






## 31. (9) Վերլուծեք տրված տեղեկատվությունը և պատասխանեք հարցերին.













Երկրագունդը երևակայական գծերով բաժանված է հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան կիսագնդերի: Երևակայական գծերից մեկը, որի 78,7%-ը ջրով, իսկ մնացած 21,3%-ը ցամաքով է անցնում, ուղղահայաց է երկրի պտույտի առանցքին և հավասար հեռավորության վրա է գտնվում բևեռներից: Նրա անվանումը հավասարար է նշանակում: Այդ գիծն անցնում է 14 պետության վրայով: Ամենաբարձր կետը, որով անցնում է այդ գիծը Կայամբե հրաբուխի լանջն է (4690 մ):

Անցում. տեքստի երկրորդ էջին, հարցերին:

Երկրորդ երևակայական գծի անվանումը կեսօրային է նշանակում: Առաջին գծի համեմատ, այն չունի ֆիզիկական էություն: Տարբեր ժամանակներում տարբեր երկրներ ունեին տարբերվող սկզբնական միջօրեական: Այսօր ճանաչված սկզբնական միջօրեականը ընդունվել է 1884 թվականին միջազգային միջօրեականային համաժողովին:

Նախքան XIX դարի 80-ական թվականները բոլոր երկրները տեղական ժամանակը սահմանում էին ըստ արեգակնային ժամացույցի: Նման ժամացույցները տեղադրված էին մեծ քաղաքների կենտրոնական հրապարակներում: Բոլոր երկաթուղային ընկերությունների ժամը համընկնում էր այն քաղաքի ժամին, ուր գտնվում էր ընկերության գրասենյակը: Այդ պատճառով մեծ կայարաններում, տեղադրված էր այնքան ժամացույց, որքան ընկերության էին սպասարկում դրանք և յուրաքանչյուրը ցույց էր տալիս տարբեր ժամեր: XIX դարավերջին ք. Վաշինգտոնում անցկացվեց միջազգային համաժողով, որտեղ երկարատև բանավեճից հետո համաձայնության եկան ընդունել այն միջօրեականը, որից պետք է սկսվեր ժամանակի հաշվարկը: Երկրագնդի մակերևույթը պայմանականորեն բաժանվեց ժամային գոտիների: Հյուսիսային և հարավային բևեռների վրա ժամային գոտու հասկացությունը կորցնում է իմաստը: Այնտեղ բևեռների ժամանակը հավասարազոր է համաշխարհային ժամանակին:

Համաշխարհային կոորդինացված ժամանակը հաշվարկում են ատոմային ժամացույցի օգնությամբ, ինչն ավելի ճշգրիտ է, քան երկրագնդի մակերևույթի որոշակի կետում արեգակի դիրքի համաձայն հաշվարկած ժամանակը: Ելնելով տարբեր պատճառներից, հարկավոր է պարբերաբար ուղղել ժամը:

Անցում. տեքստի առաջին էջին,
հարցերին:

31.1. Ո՞ր պետության վրայով *չի անցնում* տեքստում հիշատակված հավասարար գիծը:
ա. Բրազիլիայի   բ. Կենիայի   գ. Ինդոնեզիայի   դ. Սինգապուրի

31.2. (2) Ինչպե՞ս է կոչվում տեքստում նկարագրված հավասարար գիծը և ինչպե՞ս է կոչվում սկզբնական (զրոյական) միջօրեականը:

31.3. Ո՞ր պետությունում է գտնվում հավասարար գծի բարձրագույն կետը:

31.4. Աշխարհագրական երկայնությունը հաշվելուց բացի, ի՞նչն են հաշվում զրոյական միջօրեականից:

31.5. Ինչո՞ւ է ժամային գոտու հասկացությունը կորցնում իմաստը հյուսիսային և հարավային բևեռներում:

31.6. (2) Ընդունված է, որ մեկ ժամային գոտին համապատասխանում է զուգահեռականի $15^0$-անոց աղեղին: Նախատեսելով դա, բացատրեք՝
ա) Որքա՞ն ժամային գոտի պետք է գոյություն ունենա երկրագնդի վրա:
բ) Ինչո՞ւ են ժամային գոտիները իրականում ավելի շատ:

31.7. Ինչո՞վ կարող եք բացատրել տեքստում ներկայացված փաստը, որ հնում երկաթուղային կայարաններում այնքան ժամացույց էր տեղադրված, որքան ընկերության գնացք էր մուտք գործում կայարան և բոլորը ցույց էին տալիս տարբեր ժամանակ:

Անցում. տեքստի առաջին էջին, տեքստի երկրորդ էջին:

➢ ***Քարտեզի վերլուծություն- առաջադրանք # 32***

**Հրահանգ**

Ուշադիր ծանոթացեք տրված տեղագրական քարտեզին և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

## 32. (8) Ըստ տեղագրական քարտեզի պատասխանեք հարցերին.

**32.1. Աշակերտի կողմից տեղագրական քարտեզի համաձայն կատարած, ո՞ր պրոֆիլն է համապատասխանում EF հատվածին:**












32.2. Թվարկածներից, ո՞ր կետում պետք է գտնվենք, որպեսզի տեսնենք Խերգա գետի (მდ. ხერგა) վրա գտնվող կամուրջը:

ა. A ბ. B გ. C დ. D

32.3. Մոտավորապես, ի՞նչ ազիմուտով է գտնվում Լոդոմիս լեռը (მ. ლოდომისი) Խիդիսղուրի (ხიდისყური) բնակավայրից:

ა. $55^0$ ბ. $175^0$ გ. $225^0$ დ. $305^0$

32.4. Թվարկածներից , ո՞րն է համապատասխանում Աբուլ լեռան (მ. აბული) բարձրությանը ծովի մակարդակից:

ა. 165,9 մ. ბ. 175,7 մ. გ. 180,3 մ. დ. 185,1 մ.

32.5. (4) Քարտեզի վրա հիդրոգրաֆիկ ցանցն արտացոլելիս թույլ է տրված երկու սխալ: Գտեք այդ սխալները և բացատրեք դրանց էությունը:



A
B
C
D
E
F
180,7
მ. ლოდომისი
174.9
167.9
162.3
შავშეთი
176.1
167.1
167.0
168.9
173.1
158.1
156.7
მ. აბული
ახალდაბა
161.1
ხიდისყური
ტბა მარცვალა
180.5
8(12)
165
160

## რელიეფი




ა) ძირითადი ჰორიზონტალები
ბ) ძირითადი გამსხვილებული ჰორიზონტალები
გ) ჰორიზონტალების სიმაღლის ნიშნულები მ-ში
დ) კალთის დახრის მაჩვენებლები (ბერგშტრიხები)

სიმაღლის ნიშნულები ა) ძირითადი ბ) ჩვეულებრივი

სიმაღლის ნიშნულები ორიენტირებით

სახელმწიფო გეოდეზიური ქსელის პუნქტები

ორმოები

ფლატე (ბექი) (16 სიღრმე მ-ში)

ხრამები და დარტაფები

## მცენარეული საფარი და გრუნტი




წიწვოვანი ტყე

ფართოფოთლოვანი ტყე

შერეული ტყე

ხემცენარეების მახასიათებლები მ-ში: 20-საშუალო სიმაღლე. 0.20-მერქნის საშული სისქე, 6-ხეებს შორის საშუალო მანძილი

ტყის ვიწრო ზოლები და დაცვითი ტყის ნარგავები (2- ხეების საშუალო სიმაღლე მ-ში)

ორიენტირის მნიშვნელობის მქონე ცალკე მდგომი ხეები: ა) წიწვოვანი ბ) ფართოფოთლოვანი

ახალი ტყის ნარგავების სიმაღლე 4 მ-მდე (2- ხეების საშუალო სიმაღლე მ-ში)

ა) ქარქცეული ტყე ბ) მეჩხერი ტყე

ა) გაჩეხილი ტყე ბ) გადამწვარი და ძირზემხმარი ხეები

განაჩეხი ტყეში
განაჩეხის სიგანე მ-ში

ბუჩქნარი ა) ცალკე მდგომი ბუჩქები და ბუჩქების დაჯგუფებები; ბ) ხშირი ბუჩქნარი

ა) მდელოს მცენარეულობა
ბ) ლელქაშის და ლერწმის ტიპის საფარი

ხეხილის ბაღი

ადვილადგასავლელი ჭაობები

## საგზაო ქსელი




ერთლიანდაგიანი რკინიგზა
ბაქნები, გზაგასაყარები

მიწაყრილებზე (ა) და ჩაღრმავებებში (ბ) გაყვანილი რკინიგზები (2-სიმაღლე ან სიღრმე მ-ში)

ვიწროლიანდაგიანი რკინიგზა

გზატკეცილი და ხიდი

გაუმჯობესებული გრუნტის გზები გასწვრივი მცენარეული ნარგავებით

გრუნტის გზები

მინდვრის და ტყის გზები

ზამთრის გზები

ფიჩხფენილი (ჭაობზე გადასასვლელად)

## დასახლებული პუნქტები და მათი წარწერები

### კვარტლები



ცეცხლგამძლე ნაგებობების სიჭარბით

არაცეცხლგამძლე ნაგებობების სიჭარბით

**ხალთა** 33 — სოფლები 20-დან 1000-მდე სახლების რაოდენობით; 33 - სახლების რაოდენობა

ნხავთა — სოფლები 20-ზე ნაკლები სახლით

## ცალკეული ადგილობრივი ნაგებობები




ქარხნები და ფაბრიკები

მოქმედი მაღაროები

სასარგებლო წიაღისეულის მოპოვების ადგილები
თიხ.- მოპოვებული მასალა 10 - კარიერის სიღრმე მ-ში

ტორფის მოპოვება

ქარის წისქვილები

საფუტკრეები

ანძის ტიპის ნაგებობები

სასაფლაოები

კავშირგაბმულობის ხაზები

## ჰიდროგრაფია



მდინარეები, ნაკადულები, ტბები

ჭები

წყაროები

## ტოპოგრაფიულ რუკებზე მიღებული შემოკლებები

| | | | |
|---|---|---|---|
| არყ. | არყის ხე | ქვ | ქვიშის კარიერი |
| ფიჭ. | ფიჭვი | ნახ | ქვანახშირი |
| ნაძ. | ნაძვის ხე | თიხ | თიხა |
| აქ | აგურის ქარხანა | მაღ. | მაღარო |